

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2010 թվականի առաջին եռամսյակի, այդ թվում՝ մարտ ամսվա ամփոփում

Հաշտարարի գրասենյակը 2010թ.-ի առաջին եռամսյակում ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ 185 բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 185 բողոքներից 65-ը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ): Հաշտարարի քննությանը ենթակա 123 բողոքներից 24-ը չորրորդ եռամսյակում ստացվել են գրավոր տեսքով:

2010թ.-ի առաջին եռամսյակում ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	185
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	123
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	52
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ հաճախորդի ներկայացրած բողոք-պահանջի հիման վրա (որն օգնել են լրացնել Գրասենյակի աշխատակիցները)	25
1.3. Նախնական ուսումնասիրությունից հետո խորհուրդ է տրվել հաճախորդին պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում էր հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը	20
1.4. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ, ուղղված են՝	26
1.4. 1 բանկերի դեմ	18
1.4. 2 վարկային կազմակերպությունների դեմ	2
1.4.3 ապահովագրական ընկերությունների դեմ	2
1.4.4 գրավատների դեմ	4

2010թ.-ի մարտ ամսվա ընթացքում ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	43
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	35
2. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ, ուղղված են՝	9
2.1 քանկերի դեմ	7
2.2 ապահովագրական ընկերությունների դեմ	1
2.3 գրավատների դեմ	1